ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԴԱՊ-ՊԸԱՊՁԲ-15/06» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ՀՀ Տավուշի մարզ
ք.Դիլիջան

«16» «դեկտեմբերի» 2015թ.
ժամը 11 00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝
Լ.Աբազյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան**

Հանձնաժողովի անդամներ՝
Կ.Քոչարյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի օգնական**
Գ.Վարդանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ավտոմեխանիկ, պարետ-պահեստապետի ժ/պ**

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Դիլանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ**

1. **«ԴԱՊ-ՊԸԱՊՁԲ-15/06» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի գնային առաջարկների արդյունքների ամփոփման) մասին.**

1.1. Համաձայն կազմակերպության տնօրենի 2015 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 206-Ա հրամանի՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Հ. Հարությունյանը գտնվում է արձակուրդում: Հաշվի առնելով ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 168-Ն որոշման 29-րդ կետի 1-ին ենթակետը, նիստը նախագահում է հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն՝ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան Լ. Աբազյանը:

1.2. Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ ք.Դիլիջան Թբիլիսյան խճուղի 2 հասցեում:**

1.3. Գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը
«Որսորդ» ՍՊԸ	հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 29	+374 10 533 641

1.4. Գնային առաջարկներ ներկայացրած այլ մասնակիցներ չկան

1.5. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

1.5.1. «Որսորդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.6. Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.6.1. «ԴԱՊ-ՊԸԱՊՁԲ-15/06» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «Որսորդ» ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել է ընթացակարգին մասնակցելու դիմում, հայտարարություն ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, մասնագիտական փորձառության, տեխնիկական միջոցների, ֆինասական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարություն, գնային առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

Բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված էին մասնակցի կողմից:

1.7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

1.7.1. «Որսորդ» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.8. Մասնակիցների առաջարկած գները՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը/տառերով և թվերով/
1	Սայգա 410K	833 333	166 667	1 000 000 /մեկ միլիոն / ՀՀ դրամ
2	MP 135	600 000	125 000	750 000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ

1.8.1. «Որսորդ» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկի ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

1.9. Հանձնաժողովը որոշեց՝

1.9.1. «Որսորդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

1.9.2. Ուղարկել հարցում ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «ԴԱՊ-ՊԸԱՊՁԲ-15/06» ծածկագրով մրցույթի բավարար գնահատված «Որսորդ» ՍՊ ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.9.3. Ծանուցել մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.10. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ.Աբազյան

Հանձնաժողովի անդամներ՝

Կ.Քոչարյան

Գ.Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան